Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
ապրիլի 28-ի նիստի N 16
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

«ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառումը | Պատասխանատու մարմինը | Ժամկետները | Անհրաժեշտ իրավական ակտերը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Համայնքների ավագանիների կողմից որոշումների ընդունում՝ «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկե-րությունների սպասարկման տարածքում գտնվող՝ համայն-քային սեփականություն հանդի-սացող ջրամատակարարման և ջրահեռացման համա-կարգերը ջրամատակարար ընկերություններին օտարելու (նվիրատվությամբ փոխանցելու) վերաբերյալ | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, ջրամատակարար ընկերություններ (համաձայնությամբ) | 2016 թ. ապրիլ-մայիս | ՀՀ կառավարության որոշման ընդունում՝ գույքը փոխանցելու վերաբերյալ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2. | Համայնքների ավագանիների կողմից որոշումների ընդունում՝ «Երևան Ջուր» փակ բաժնե-տիրական ընկերության սպասարկման տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը պետությանը՝ ի դեմս ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին նվիրատվությամբ փոխանցելու վերաբերյալ | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 2016 թ. ապրիլ-մայիս | ՀՀ կառավարության որոշման ընդունում՝ գույքն ընդունելու վերաբերյալ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3. | Համայնքների ավագանիների կողմից որոշումների ընդունում՝ իրենց կողմից «Լոռի-ջրմուղ-կոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետի-րական ընկերություններում տնօրինվող բաժնետոմսերը նվիրատվության կարգով Հա-յաստանի Հանրապետությանը փոխանցելու վերաբերյալ | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 2016 թ. ապրիլ-մայիս | ՀՀ կառավարության որոշման ընդունում՝ բաժնետոմսերն ընդունելու վերաբերյալ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 4. | Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայու-թյուններ մատուցող ընկերությունների ակտիվների գույքագրման նպատակով ապահովել չհաշվառված գույքի փոխանցում՝ «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի մասով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, իսկ մնացած գույքը՝ համապատասխան ընկերություններին | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), ջրամատակարար ընկերություններ, սնանկ ճանաչված «Երևանի ջրմուղ-կոյուղի» և «Ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կառավարիչներ (համաձայնությամբ) | 2016 թ. ապրիլ-մայիս | ՀՀ կառավարության որոշման ընդունում | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5. | Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություն-ներ մատուցող ընկերություն-ների ակտիվների գույքագրման նպատակով ապահովել սնանկ ճանաչված «Երևանի ջրմուղ-կոյուղի» և «Ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկե-րությունների հաշվեկշիռներում առկա և ջրամատակարար ընկերությունների կողմից շահագործվող գույքի փոխանցում ՀՀ գյուղա-տնտեսության նախարա-րության ջրային տնտեսության պետական կոմիտեին | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), «Ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կառավարիչ (համաձայնությամբ) | 2016 թ. ապրիլ-մայիս | | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 6. | Ընկերություններին փոխանցված գույքի վերագնահատում և ներառում հաշվեկշիռներում | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, ջրամատակարար ընկերություններ, գույքային իրավունքների գրանցման և վերագնահատման խորհրդատու (համաձայնությամբ) | 2016 թ. մայիս-հունիս | | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 7. | Գույքի նկատմամբ սեփակա-նության իրավունքի պետական գրանցման նպատակով մինչև 375 գույքային օբյեկտների կազմում՝ ըստ ՀՀ գյուղա-տնտեսության նախարա-րության ջրային տնտեսության պետական կոմիտեի («Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի մասով) և | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, ջրամատակարար ընկերություններ, գույքային իրավունքների գրանցման և վերագնահատման խորհրդատու (համաձայնությամբ) | 2016 թ. ապրիլ-մայիս | Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների սպասարկման տարածքների | | | | |
| 8. | «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, ջրամատակարար ընկերություններ, գույքային իրավունքների գրանցման և վերագնահատման խորհրդատու (համաձայնությամբ) | 2016 թ. հուլիս | | ՀՀ պետական բյուջե |
| 9. | «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների գույքի փոխանցում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե՝ միաժամանակ մինչև 31. 12. 2016 թվ. գույքի անհատույց օգտագործման իրավունք տրամադրելով համապատասխան ընկերություններին | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, ջրամատակարար ընկերություններ (համաձայնությամբ) | 2016 թ. հուլիս-օգոստոս | ՀՀ կառավարության որոշման ընդունում | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 10. | Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի անունով՝<br>1. «Երևանի Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքում գտնվող՝ համակարգերի մասով՝ գույքի սեփականության իրավունքի գրանցում,<br>2. «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղ-կոյուղի», «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություն-ներին փոխանցված համա-կարգերի մասով՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերագրանցում: | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, գույքային իրավունքների գրանցման և վերագնահատման խորհրդատու (համաձայնությամբ) | 2016 թ. օգոստոս-սեպտեմբերի 10 | | ՀՀ պետական բյուջե |
| 11. | Գույքը նոր վարձակալին հանձնում | ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 2016 թ. հոկտեմբեր | ՀՀ կառավարության որոշման | Ֆինանսավորում չի պահանջվում: |